

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրելի գրվում են ուղղակի
Тифлис, Редакция „Мусако“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիցիտով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները—չէրքին տե-
սու թիւն: Նամակ Գաղարուից: Ներքին լուրեր:
—Արտաքին տեսութիւն: «Մասիս» թղթ-
թանգարան: «Մշակ» հեռագիրներ: Յայտա-
րարութիւններ: Բանասիրական, Հայերէ
Քարտէլ մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԵ- ՆԵՐ

Հայտնի է, որ թիւերի նախա-
գահութեան ժամանակ Ֆրանսիան
կոմունարներէն շատերին, որոնք
իրանց հայրենիքում ներքին երկ-
պառակութիւն էին գցել, պատ-
ժեց մահական պատժով իսկ միւս-
ներին աքսորեց Վոր-Վալէդոնիա
երկիրը:

Բայց ոչոքին յայտնի չէր թէ
աքսորանքի մէջ ինչպէս էր վար-
վում Ֆրանսիական զինուորական
իշխանութիւնը քաղաքական դա-
տապարտվածների հետ:

Այժմ, երբ Գրեվիի ժամանակ
ներդրութիւն ստացած մի բանի
կոմունարներ վերադարձան ի-
րանց հայրենիք, այդ վերադար-
ձած քաղաքական յանցաւորներից
մին, Սիմոն Մայէ, հրատարակեց
իր ութ տարվայ բանտարկու-

թեան մասին մէմուարներ: Այս-
տեղ, կարճ առաջնորդող յօդու-
ածում, անհնարին է հասկացողու-
թիւն տալ ընթերցողին այդ սար-
սափելի, սիրտը պատռող գրուած-
քի մասին: Ֆրանսիան, տաան և
իններորդ դարի լուսաւորված Ֆր-
րանսիան, այն երկիրը որ յայտնեց
ազատութեան, եղբայրասիրու-
թեան և հաւասարութեան սկզ-
բունքները,—գործ է դնում իր բա-
ղաքական յանցաւորներին պատ-
ժելու համար, նրանց տանջելու
համար աւելի սարսափելի միջոց-
ներ, բան թէ որ և է ժամանակ
կրօնական ինկվիզիցիան էր գործ
դնում հերետիկոսների դէմ...

Մենք հրաժարվում ենք մեր
թղթի գրիչով նկարագրել այն սար-
սափելի, անհաւատալի տանջանք-
ները, որոնց ենթարկվում են Վոր-
Վալէդոնիայի մէջ Ֆրանսիայի կո-
մունարները Ֆրանսիական հանրա-
պետութեան հրամանով...

Գազան, արիւնարբու բերդերը
Հայաստանում հրեշտակներ են,
համեմատելով Ֆրանսիացի գազան
օֆիցէրների, գնդապետների և գե-
ներալների հետ, հանրապետու-

թեան այդ ներկայացուցիչների
հետ, ինչպէս նրանց նկարագրում
է Սիմոն Մայէ:

Ով որ կամենում է ծանօթա-
նալ այդ անհաւատալի դազանու-
թիւնների հետ, թող կարդայ
ռուս «Աթո» ամսագրի մայիսի
տետրակը, որի մէջ թարգմանված
են Սիմոն Մայէ կոմունարի մէ-
մուարները:

Մէմուարները այնքան սարսա-
փելի բաներ են նկարագրում, այն-
քան անհաւատալի էին երևում
Ֆրանսիացիներին, որոնք տեղե-
կութիւն էլ չունէին թէ ինչ է
պատահում Ֆրանսիական կոյսիա-
ներում,—որ Ֆրանսիական հասա-
րակական կարծիքը սաստիկ յուզ-
վեց, երբ Սիմոն Մայէի գիրքը
լոյս տեսաւ: Այդ գիրքը այնքան
ահագին աղմուկ հանեց ամբողջ
Ֆրանսիայում, որ ազգային ժողո-
վում կառավարութեանը հարցում-
ներ առաջարկվեցան, լրագրու-
թեան մէջ սկսվեցաւ կատաղի
բանակռիւ... Կառավարութիւնը
սկսեց հերքել Մայէից հաղորդ-
ված տեղեկութիւնների ճշդու-
թիւնը, այն աստիճան հրեշտաւոր

էր երևում նրան ֆրանսիական
զինուորական իշխանութեան բար-
բարոս վարմունքի նկարագրու-
թիւնը: Բայց շուտով նկարա-
գրութեան ճշդութիւնը ստուգ-
վեցաւ ականատես կոմունարների
վկայութիւններով և լրագիրնե-
րում տպված նամակներով: Այն
ժամանակ կառավարութիւնը ըս-
տիպվեցաւ ըննութիւն նշանակել
Վոր-Վալէդոնիայի վարչութեան
վրա և մի բանի ամսից յետոյ
վերցրեց իր կոյսիաներից զինուո-
րական իշխանութիւնը և նշանա-
կեց քաղաքական իշխանութիւնը:

Ֆրանսիական «Le Livre» ա-
նունով ամսագիրը խորհուրդ է
տալիս կարդալ Սիմոն Մայէի յի-
շատակարանը ամեն ազգութեան
և ամեն դասակարգի մարդիկնե-
րին, որպէս զի կառավարվածները
ծանօթանան այն միջոցների հետ
որոնք շատ անգամ գործ են դրվում
յանցաւորների վերաբերութեամբ,
իսկ կառավարողները կարդան,
որպէս զի փոքր ինչ աւելի գութ
ունենան:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷ ԳԱՐՈՒԹԻ ՄԷՋ *)

Անգլիայում հրատարակվող մի օրագրի մէջ
տպվեցաւ մի յօդուած վերաբերող վերնագրով, ո-
րի հեղինակն է Հնդկաստանի փէշաւուր քաղա-
քում բնակվող մստեր Հիւզը: Այդ պարունը մի
բանի բարեկամների հետ փէշաւուր քաղաքում ա-
ղաների համար հիմնած ունէր մի դպրոց և ինքը
մի քանի ամիս առաջ անձամբ գնացած էր Բա-
բուլ: Բաբուլի մէջ նրա դասը հայերը մեր ամե-
նիս համար հետաքրքրական լինելով, հարկաւոր
ենք համարում մի քանի քաղաքացիներ անել նրա
յօդուածից:

Պատուելի ձանապարհորդի հաղորդած տեղեկու-
թիւնների համեմատ, սկսեալ Նադիր շահի օրերից
(1738 աւ.), Բաբուլում կայ հայոց մի եկեղեցի,
որ գտնվում է Բալախիսար կոչված ամրոցի մէջ,
ուր սպանվեցաւ Անգլիայի դեսպանը, Ժողէֆ
Վուլֆ անունով անգլիացի քարոզիչը 1832 թիւն
միջեալ եկեղեցում քարոզ կարդաց, իսկ 1879 թը-
ւին փէշաւուր քաղաքի ազգով աւղան հովիւր պա-
տուելի իմամ-Շահ Նոյն եկեղեցում քարոզ կար-
դաց:

Քաղաքի տարվեցան հայերը Նադիր-շահի ձեռ-

քով. որոնցից,—պարոն յօդուածագիրը չէ յիշում,
միայն ասում է, որ սկզբում նրանց թիւը հասնում
էր 200 ընտանիքի, իսկ այժմ մնացել են 4 այր,
8 կին և 2 երեխաներ, ընդամենը 14 հոգի: Ու-
րանք երկար տարիներ քաճառայ չեն ունեցել և
մկրտվում էին անգլիական եկեղեցու ներկայացու-
ցիչներին: ձեռքով, որոնք ժամանակ առ ժամանակ
այնտեղ այցելութիւն էին գործում: Երկու հոգի
մկրտվեցան 1839 թիւն, 3 հոգի 1842-ին, իսկ շա-
տերը գրվում էին Հնդկաստանի փէշաւուր քաղաքի
միսիոնարներից մկրտութիւն ընդունելու համար:

1842 թիւն Բաբուլի մէջ հայոց եկեղեցուն այ-
ցելով մստեր Ալէն անունով անգլիացի քարոզիչը
նոյնպէս մկրտեց մի քանի հայերի, որոնցից մէկը
Սարգիս խորդ-խան դեռ կենդանի է: Այդ այցե-
լութեան մասին քարոզիչը հետեւեալն է գրում.

«1842 աւ. օգոստոսի 1-ին Շէհրէ գնացի: Իմ
բարեկամ մստեր Ֆիկոսից լսած էի, որ նա Բա-
բուլի մէջ հայազգի քրիստոնեաներ է գտել և
1832 թիւն նրանցից երկուսին մկրտել է,—ես էլ
սկսեցի նրանց որոնել: Շատերից հարցնելով, հա-
յերին գտայ Բալախիսար ամրոցում, դէպի ձէլվե-
քաղի դուռը տանող մի նեղ փողոցի մէջ: Նրանց
աները գտնվում էին փողոցի հարաւային կողմում:
Այս փողոցից դուրս գալով, անցայ մի քաղաքա-
նայի մէջ, որի շուրջը խանութներ և մէջը հայերի
արհեստի և պարագմունքների վերաբերալ գոր-
ծիչներ ու պարագայք կային: Այստեղից մի նեղ
դռնով մտայ եկեղեցու բակը: Եկեղեցին փոքր ինչ
ուրթն էր, բայց յատուկ խալիսներով պատած և
խիստ մաքուր պահված տեսայ: Եկեղեցու սեղանը
գտնվում էր արեւելեան կողմում, որ նայում էր
դէպի արևմուտք. սեղանի վրա դրած էր մի հին
պատկեր, որ Յիսուսի, Մարիամի և Յովսէփի նը-
կարագրին էր ներկայացնում: Սեղանի վրա 6 աշ-
տանակ, երկու խաչ և 2 Աւետարան կային: Իսկ
նրա հանգկայ կար մի դրեւակով, որի վրա դրած

էր ժամագիրքը: Մեզ եկեղեցին տանող հայերը
պատմում էին, թէ իրանց նախնիքը Բաբուլ բեր-
ված են եղել Նադիր շահի ձեռքով, որոնց թիւը
հասնում էր 200 ընտանիքի, իսկ այժմ մնացել է
14 ընտանիք միայն, որոնք հաշվում են 35 հոգի
թէ արական և թէ իգական սեռից: Այստեղի հա-
յերի արհեստը Շիրազի գինի պատրաստել և արալ
քաշելն է: Մեզ մօտ գտնվող հայերը յայտնում
էին, թէ աղաներից խիստ հարստահարութիւն-
ներ և բռնաբարութիւններ են կրում:

«Այդ հայերի հարստութեան տէր լինելը կամ
չը լինելը ինձ յայտնի չէ: Նրանց թաղը մէկ աղ-
քատ թաղի էր նմանում, բայց ինձ մանածող կինը
և տղամարդը բաւական լաւ էին հազնված: Եթէ
գրանք հարստութիւն ունեն, բայց իրանց հարստու-
թիւնը թագնելու շատ պատճառներ կային: Այս-
պիսի խորին և խաւար մի երկրում քրիստոնեանե-
րի մի փոքրիկ խումբ գտնելու մեծ ուրախութիւն
աղցեց իմ մէջ: Սրտումս աղօթեցի, որ ուրախու-
թեանս համեմատ, սուրբ Հոգու շնորհիւ, այդ խում-
բը իր շրջապատի խաւարը լուսաւորելու համար մի
պայծառ ձառագայթ դառնայ: Ինձ մօտ գտնվող-
ները հասկանալով, որ ես քրիստոնեայ մի եկեղե-
ցու ներկայացուցիչ եմ,—նրանցից մի կին ոտներս
ընկնելով, կամենում էր համարելու: Բայց ես թող
չը տուցի, և եթէ նրա լեզուն գիտնայի, Պետ-
րոսի կուռնէկիտին ասածին պէս, կասէի նրան.
«Եկեղեցի, ես ինքս էլ մարդ եմ»: Նրա հետ եղող
թիմուր անունով տղամարդը, որ խօսում էր աւ-
ղաներէն, ալ ձեռքս բռնեց, նախ դէպի շրթունք-
ները տարաւ, համբուրեց, յետոյ ճակատի վրա
դրեց: Այդ պարունը պատմում էր, 13 տարի է,
որ իրանք քաճառայ չունեն, և ինքը անձամբ գնա-
ցած է եղել մի քաճառայ Հնդկաստանից հրաւիրե-
լու և Բաբուլ բերելու, և քաճառային մինչև փէ-
շաւուր բերելը, բայց նա վախեցաւ և ձանապար-
հից յետ դարձաւ:

*) Այդ յօդուածը տպվեցաւ Կ. Պոլսի հայերէն
տաւերով և թիւրքերէն լեզուով հրատարակվող
«Մանգրուլէի» լէֆթեարո լրագրի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿԻ ԴԱՆԱՐԻՈՒՑ

30 մայիսի

Ում յայտնի չէ, որ գիւղացին է վարում և ցա-
նում երկիրը հազար ու մի տեսակ դժուարու-
թեամբ՝ արեգակի և անձրևի փոփոխակի ազդե-
ցութեան տակ։ Ով չէ իմանում, որ նրա ճակա-
տից ցած գլորով աղի քրտնքի կաթիլներն են
որ խառնվելով կոշտացած հողի կոյտերի հետ,
փափկացնում են նրան և նրանից արտաբերում
գործնի և գարու հատիկները։ Ով չէ իմանում և
նոյնպէս, որ այս տուրուն և աշխատասէր գիւղա-
ցու կոշտ ձեռքերի արդիւնքն են այն փափուկ և
սպիտակ հացերը, որ վայելում են առանց բացա-
ռութեան ամեն կարգի և աստիճանի մարդիկ։
Բայց անս այսօր Ալէքսանդրապոլի մօտ գտնվող
Դանարի գիւղը (որի մասին արդէն խօսեցին էինք
«Մշակի» 58-րդ համարում) կանգնած է սովի զար-
ուարների դէմ, հաց է խնդրում, բայց ոչ քան
չէ կարողանում տալ։

Անգութ ձակառարները-սովակալ թանգութիւնը,
չը բաւականացաւ նրանց տաւարը սովակոտոր
անելուց, նրանց ընտանեաց աննշան զարդն ու
զարդարանքը ծախելուց, նրանց տան անօթեղէն-
ները բոլորը սովի որովայնը լցնելուց, այժմ էլ
ասում է. «տուր նրան քո տան ծածքի միտած
գործերը և փայտերը, իսկ դու ապրիր երկրի
կապոյտ վրանի տակ, բաց օդի մէջ»։ Գիւղացին
ի մանկութենէ սովոր է հպատակվել ձակառա-
րին և ակամայ կրել նրա ծանր լուծը, որից
բացառութիւն չէ կազմում և դանարեցին, շտա-
պում է կատարել նրա հրամանը, ուստի ահա-
սիկ մինը իր մարագն է քանդում և վրայի փայտը
ծախում մի աննշան վարձով, գնում է սովինը մի
րուբլով և կերակրում է մինչև երկու օր 16 թէ
մանր և թէ խոյր անդամներից բաղկացած մի ըն-
տանիք։ Երկրորդն էլ ծախում է իր տաւարանոցի
փայտը 4 ռուբլով և կերակրվում է մի քանի օր
բուսեղէնների օգնութեամբ։ Երրորդն էլ այնտեղ
քանդում է իր բակը (չարդաղ), որով պարտա-
տում է խիստ անկու մի քիչ ալիւր՝ իր բանջարե-
ղէն կերակրին նիւթ և համադրութիւն տալու հա-
մար։ Վերջապէս անս այսպիսով Դանարիւմ
օրէցօր զգալի և նշանաւոր է դառնում աւերակաց
թիւը։

Կենսիկի այսպիսի ցաւալի հանգամանքների տակ
ենթարկված խեղճ գիւղացու հալը ինչ պիտի լինի
ապագայում, մինչդեռ դանարեցին ունի մի մաս-
նաւոր հող և նրա քառորդ մասն է ցանել այս
տարի և այն կիսով, և ինչպէս առաջին նամակում
ասել էի, պարտքի և փոխառութեան թիւն էլ հա-

սել է մի աներակալելի չափազանցութեան, և որ
ամենացաւալին է այսօր էլ դանարեցին ստիպված է
ձեռք վերանշել իր այն անշուք խրճիթներից, ո-
րոնք պատկարում էին նրան ձիւնի, անձրևի, ա-
րեգակի ժամանակ հայտնաբերել և սառը գիւղերի արդ-
եցութիւնից։

Միայն մի յոյս կայ, որը այսօր միջիջրում է
դանարեցուն. այս յոյսն է տէրութեան խոս-
տումը, որ կամենում է վարձատրել դանարեցինե-
րին նրանց արտերի վնասի փոխարէնը, որովհետև
1877-թուականին կովկասեան ներգործող գնդի
զօրաբանին գետեղվելով սրանց սահմանում, վեր-
ջացրին սրանց ցանքի ամենանշանաւոր մասը՝ այն-
պէս որ, հազու կարողացան ձեռք բերել նրա քա-
ռորդ մասը։ Վերջապէս այժմ մի մասնաւոր տե-
ղեկութիւն է պահանջվում դրա մասին Ալէքսան-
դրապոլի գաւառապետ պ. Նէվտոնովից։ Դանար-
եցին մեծայայտ է պ. Նէվտոնովի ճշմարտու-
թեան և բարեխղճութեան վրա, որ նա չի զլա-
նայ չուտով վնասողական եզրակացութեան հասց-
նել իրան վերաբերեալ պահանջը։

Եւ ինչ երկարացնեմ, անս այս րօպէին գիւղիս
մէջ շատ սոված երեխայք, կանայք և տղամարդիկ
կան, որոնք իրանց քաղցը յագեցնում են միայն
բուսեղէններով։ Մի այլ տեսարան է ներկայաց-
նում այն մարդը, որը մինչև ցայսօր ապրել էր
պատուով և համեստութեամբ, նա այժմ աղքատ է
և սոված. անց է կենում ընկերի մօտից կորապու-
ն և աչքերը քաղ զցած. նա իր չորեկանների վրա
եղբայրն խաղացնում է ակամայ ծրիւղները. բայց
ողորմելին՝ ի դուր է աշխատում ծածկել իր ըն-
կերից գաղտնիքը, երբ նրա գալկացած դէմքի վր-
ա պարզ կարգադրում են ներքին հոգեկան խը-
ռովութիւնները, և թէ ինչ գործողութիւններ են
կատարվում նրանց ներսում։ Երեխայքը, որոնք
դեռ ևս չեն հասկացել պատկառանքը և չափաւո-
րութիւնը, ամեն անգ ի դարձ անոթների մօտ
կան են ընկնում դժբախտ մօր ծծերից, հաց են
խնդրում. «ես ճնճդպաշարով ապուր չեմ ուտէ,
հաց տուր», ողորմելի մայրը ինչ անէ, նա բռնում
է երեխայի ձեռքից, ներկայացնում իր ամուսնուն.
բայց նա ինչ պէտք է անէ, երբ նրա դուրսինը
աւելի դժոխային է։ Նա գրկում է երեխային,
և փոխանակ հացի միայն արտասուքով երեսն է
թելում։

Ուրեմն ինչ է մտածում պ. Նէվտոնովը. խըն-
դում ենք շտապել. եթէ ոչ, այստեսակ ժողո-
վրդի արտասուքը դժուար է կրել։

Յ. Տէր-Բարսեղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Որքան մեզ յայտնի է Ռուսաստանից յօգուտ
Հայաստանի սովառանքների ուղարկվեցաւ մօտ

կազմով, մետաքսեայ թաշկինակների մէջ փաթա-
կած, որոնց ժողովուրդը մեծ յարգանքով է վե-
րաբերում։ Դասերի մէջ տեղ կայ մի զորակաւ,
որի վրա դրած է ժամանակը և ամեն օր նրանից
կարգում են։ Երբեմն կարգացում է անգլիա-
կան եկեղեցու պարսկերէն թարգմանված ժամա-
ղիրքը։ Քառուկի քրիստոնեայ հայերը այս քաղաքը
գալուց յետոյ, մինչև անցեալ օգոստոս ամիսը, ոչ
մի անգամ իրանց եկեղեցում հաղորդութեան խոր-
հուրդը կատարած չեն եղել։ Բայց իւրաքանչիւր
տարի երկու անգամ, այսինքն քրիստոնէի ծնունդի
և յարութեան դատիկներին, ուսումն էին մի տե-
սակ սուրբ հաց (շշմարք, որ ուղարկվում էր Ե-
րուսաղէմից) Հաղորդութեան համար պատրաս-
տված անօթը (սկիւր), արծաթից շինված լինելով,
աւաղակների ձեռքը չընկնելու համար, զգուշու-
թեամբ պահվում է եկեղեցու պատի մէջ։ Ան-
ցեալ այնպէս, հաղորդութեան խորհուրդը կատա-
րելու ժամանակ, հայերը թոյլ չը տուեցին պա-
տուելի իմամ Դահիյի յիշեալ անօթը գործածել,
բայց եթէ պատուելին այնտեղ մնալու և նրանց
հովելու խօսք տալու ինչէր, պատրաստ էին սկիւր
նրան յանձնել։

Հայերի գերեզմանատունը Բալահիսարից մօ-
տաւորապէս մէկ մղոն հեռու է։ Այդ գերեզմա-
նատունը սկզբում մի պարտէզ է եղած, և հայերի
պատմածին համեմատ, այնտեղ առաջին մի քը-
րիստոնեայ նահատակ թաղված լինելու պատճա-
ռով, յետոյ պարտէզը գերեզմանատուն դարձաւ։
Գերեզմանատան տապանաքարերի ոմանց վրա
տննվում է 1769 թականը։ 1839—41-ին, երբ
անգլիացիք տիրեցին Քառուկ քաղաքը, այդ գե-
րեզմանատան մէջ մի քանի անգլիացի օֆիցերներ
թաղվեցան, բայց անգլիացիները այնտեղից հե-
ռանալուց յետոյ, աւաղակները հարստութիւն գրա-
նելու յուսով նրանց գերեզմանները բաց արին,
Քառուկի մէջ գտնվող հայերը մի ժամանակ Ա-

60,000 ռուբլ. Մեզ հարկաւոր կը լինէր ճիշդ թը-
ւանչաններ ունենալ և խնդրում ենք, եթէ հը-
նար է, խմբագրութիւններին և կանանց մասնաժո-
ղովին հաղորդել մեզ ճիշդ թւանչաններ, թէ ինչ-
քան փող հաւաքեցին և ուղարկեցին թէ Վանի և
թէ Կ. Պոլսի մասնաժողովներին։ Մենք հաշվում
ենք մօտաւորապէս այսպէս. բայց «Մշակից» որ
ուղարկեց 30,000 ռուբլ. ուրիշ հիմնարկութիւն-
ները, որքան մեզ յայտնի է, ուղարկեցին հետեւեալ
գումարները։ Կանանց մասնաժողովը 10,000 ռուբլ.,
«Փորձի» խմբագրութիւնը 6000 ռուբլ., «Մեղուի»
խմբագրութիւնը 4000 ռուբլ., Ս. Պետերբուրգից
և Մոսկովայից մօտ 6000 ռուբլ., վերջապէս Գաղ-
թականների մասնաժողովը և Թիֆլիսի հողեր կօն-
սիտօրիան միասին 2000 ռուբլ., ուրեմն ընդամենը
Ռուսաստանից ուղարկվեցաւ 58,000 ռուբլ.։

«Մշակին» վեց ամսով գրվել ցանկացողները
պէտք է շտապեն դիմել խմբագրութեանը, որպէս
զի մենք իմանանք թէ մեր լրագրի ինչքան օրինակ
պէտք է տպելը յուլիսի 1-ից սկսած։

«НОВОСТИ» լրագիրը լսել է որ այսուհետեւ քա-
ղաքական յանցանքների գործերի լուսնութիւնը
աղափարված կը լինի զինուորական դատարանների
իրաւասութիւնից և այդ գործերը յանձնված կը
լինեն ծայրագոյն յանձնաժողովի զինուորի և հա-
սարակ դատարանների լուսնութեանը։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ
ժողովրդական լուսաւորութեան այժման միջիտար
Ա. Ա. Սաբուրով չէ համակրում նախկին միջիտար
Տօլստոյ կոմսից մշակված համալսարանական նոր
կանոնադրութեան օրէնսդրական ճանաչարդով
հաստատվելուն։

Ղ.ՈՒԲԱՅԻՑ պ. Յ. Վաքիբեանցը, պատասխանե-
լով «Մշակի» № 79-ի մէջ տպված Ս. ստորագրու-
թեամբ նամակին, ասում է, որ տեղային եկեղե-
ցու նախկին երեցիփեխան պ. Վաքիբեանցը ամե-
նակն չէ սեփականել իրան եկեղեցապատկան
4000 ռուբլին, այլ, որպէս շատ զուբեցիներ, տո-
րոնի ընկնելու ժամանակ, ինքն նոյնպէս դժբաղ-
դութեան հանդիպելով, չը կարողացաւ վճարել
յիշեալ գումարը։ Բայց նա իրան պարտական հա-
մարեց եկեղեցուն, գումարի փոխարէն տալով
պարտավորակ և մի և նոյն ժամանակ ապա-
հովութեան համար գրաւ դնելով 5000 զանայ
տորոն, իր սեփական տունը և երաշխաւոր տալով
իր երկու եղբայրներին։

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ, որ տեղային Դու-
մայի նստերը շատ անգամ չեն կայանում, որովհե-
տե՛ պ. պ. ձայնաւորները զանազան կուսակցու-
թիւններին են բաժանված, եթէ որ և իցէ կուսակ-

զանիտանի կառավարութեան բարձր պաշտօնների
գլուխը անցան, և շատերը պատերազմական բա-
նակների զօրապետներ եղած են։ Էմիր-Ալիմ-խա-
նը պատկերացաւ մի հայ աղջկայ հետ, և այժմ Սա-
մարկանտի մէջ ռուսաց բանակում հիւր եղող
Սէրգաբ—Իշայի-խանը ծնված է նոյն հայ տիկ-
նայից։ Իսկ այժմ Քառուկի մէջ մեծ նշանակու-
թիւն է ստացել տեղային հայերից մի բժիշկ, մի
հայ ևս Էմիրի տան անգլիական լեզուի վարժա-
պետ է, որը ուսումն և կրթութիւն է ստացել
Փէշաւուրի միջնոթարների դպրոցում։

Կարգաւով վերոյիշեալ տեղեկութիւնները արեւելքի
խորքում կորած և սպառված հայոց մի զարթա-
կանութեան մասին, եւ յակամայից յիշում եմ մի
խօսակցութիւն, որ շատ տարի առաջ ունեցայ
Էլմիթում մի բարձրաստիճան եկեղեցականի
հետ։

—Սրբազան հայր, դուք ունե՞ք Էլմիթում
աշխարհագրական որ և իցէ քարտեզ, որի վրա
նշանակված լինէր, թէ ձրտեղ են բնակվում հա-
յերը։

—Մի այսպիսի քարտեզ, պատասխանեց սրբա-
զանը. —մինչև այսօր չէ հրատարակված, եթէ ոչ,
մենք ուրախութեամբ կը գնէինք։

—Այդ իրաւ է, չէ հրատարակված, բայց բա-
ական է գնել ամենահասարակ քարտեզներ և
նրանց վրա կարմիր աստղանշաններով նշանակել, որ-
տեղ որ հայեր կան։

—Այդ շատ դժուար է, որովհետեւ մեզ յայտնի
չէ, թէ Հայաստանից դուրս այլ ևս ո՞ր երկրնե-
րում հայեր են գտնվում։

—Ընդհանուր հայոց Հովուապետը պէտք է գի-
տնայ, թէ իր հօտը որտեղ է գտնվում, որ նրա
վրա խնամք տանելու դիւրութիւն ունենայ։

—Մենք ըստ մեր կարեւոր հովիւում ենք մեր

ցութեան անախորժ մի հարց պիտի վճռվի, այդ
կուսակցութեան պատկանող ձայնաւորները չեն
ներկայանում։ Բայց դրանից ձայնաւորներից ոմանք
իրանց թող են տալիս առանց Դումայի վճռի և
համաձայնութեան զանազան կարգադրութիւններ
անել քաղաքում։

Հանգուցեալ Տէր-Աբրահամեանցից կտակած
1000 ռուբլ պ. Գարբիէլ Ստեղծակեանց, ինչպէս
լսում ենք, յատկացրեց Թիֆլիսի Գալանեան
օրիորդաց դպրոցին, այն ինչ Հաւաքարի օրիոր-
դաց Մարիամեան դպրոցը գուրկ է մնում ամեն
նիւթական միջոցներից։ Մեռնողը ինքն Հաւաքարի
էր և աւելի լաւ չէր լինի յատկացնել նրա կտակած
գումարը իր թաղի դպրոցին։ Գայանեան դպրոցը
այնպէս էլ մեծֆմիջոցներ ունի, այն ինչ բուն
հայոց, Հաւաքար ասված ահագին թաղը գուրկ է
մնում ամեն տեսակ կանոնաւոր ուսումնից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի թշուառութեան տիպար գաւառ-
ներէն հեծեծանաց ձայններ կարճակուին,
կարծես հերիք չէին մեր թշուառ ժողո-
վրեան՝ բարբարոսաց այնչափ խժըրժու-
թիւններ, նոր տաքնապ և արհաւիր մ'ալ
երեւան կիսէ Հայաստանի մէջ, ողորմելի
ժողովուրդը լափերիւնդոսի մէջ գլորելու։
Անուն մ'ը գոր չեմ՝ ինքար առանց արտա-
սուսց յիշելու, սով մը դուրս կեանէ ի հա-
յաստան, և օրըստօրէ կը սաստկանայ ոչ միայն
ի վան, այլ և ի գաւառ, Սասուն, Խուժ
Բաւնաշէն, Մուշ, Տիգրանակերտ գաւառներն.
այս նահանգներէն բազմաթիւ ընտանիք կը
զաղթեն քաղաք և գիւղեր, որով շատ ծուղը-
ներ իրենց գաւառներ փողոցներ ձգելով կը
անհետանան։

Տարնոյ թէ գիւղեր և թէ քաղաք երե-
սունի չափ անձնք սովամահ կորսուելան։
Մշոյ Հայ և Տաճիկ հասարակութիւնն հե-
ռաքաւ Բ. Դրան, Պարտիաքարանի, Քոմիտե-
րաց և Բաղիշոյ կուսակալին տուած բողոք-
ներուն ապարդիւն մնալը տեսնելով, յուսա-
հատական ձեռնարկի մը դիմեց։ Սահմանա-
կան և ոչ մահմետական հասարակութիւնն
սովուն տուած զոհերով յուսահատած և

հօտը, որ մեզ աւելի մօտ է, իսկ հեռաւորներ
համար ինքը Տէրը հող կը տանէ։

—Բայց Յիսուս Քրիստոս հովիւներին այսպէս
պատուիրեց. Նա հրամայեց թողնել իննսուն և
իննը ոչխարներ և գնալ մի հատ կորած ոչխարին
օրոնելու։ Զանազան խուլ և անձանօթ երկրիե-
րում գտնվում են հայեր, դրանք ազգային ամբող-
ջութիւնից բաժանված, հայրենի երկրից հեռա-
ցած, այլ խօսքով, հօտի ընդհանրութիւնից ան-
ջատված ոչխարներ են, պէտք է այդ կորածնե-
րին օրոնել, պէտք է դրանց համար մտածել։

—Մարդիկ չունենք, եղաւ սրբազանի պատաս-
խանը, —հովիւներ չունենք, որ Յիսուս Քրիստոսի
ասածի համեմատ՝ իրանց անձը դնէին ոչխարների
վրա։ Առաջարկեցք մեր միաբանութիւնից, ումը
որ կամենում էք, դնալ Հնդկաստան, գնալ Աֆրի-
կա, վերջապէս մի հեռու երկիր, ուր որ հայեր
կան, — կը տանէք, ոչ որ յանձն չի առնի
Բայց տուեցք նրանց Բեսարաբիայի, Դուբու-
կան և իցէ մի ուրիշ վիճակ, իսկոյն վաղ կը
տան։ Այստեղ վայելչութիւններ, դուարճութիւն-
ներ և շահեր կան, իսկ հեռաւոր երկրներում—
դժուարութիւններ և վտանգ միայն։

—Այդ նրանից է ծագում, սրբազան հայր, որ
մեր եկեղեցականներին չէ առաջնորդում որ և ի-
ցէ բարձր և վսեմ միտք, որ և իցէ իրելալական
ձգտում. —մեր եկեղեցականները միաբանաբար ոգի
չունեն։ Նրանք գուրկ են քրիստոնէութեան դա-
ղալիտի տարածելու ներշնչութիւնից. Նրանք ըն-
դունակ չեն ոչ միայն հեթանոսներին դարձնելու
դէպի մեր եկեղեցին, այլ պահպանելու նոյն իսկ
լուսաւորի գաւառներին հայրենի դաւանութեան
մէջ։ Այս տեսակ հովիւների ձեռքի տակ հօտը
հեռագնեւ նուաղելով, վերջապէս կը սպառվի։

Կարդալով «Հայերի Քառուկի մէջ յօդուածը,
եւ ակամայ յիշեցի այդ խօսակցութիւնը։ Մէկ ու-
կէս դար առաջ Նազիր Կար հայերից 200 հը-

մանաւանդ քաղաքիս փոփոխութիւն 15 չափ
ցորեանն ալ անբաւական նկատելով, ապրիլի
15-ին մէկտեղ ժողովելով միութիւն մը կը
կնքեն մէջերնին՝ ձեռնարկ մը ընելու այս
խնդրով մասին: Ապրիլ 15-ին առաւօտուն
կանուխ ի դիմաց Հասարակութեան յանդարձ
մաներէն կողմարարէ որ ամբողջ խանութ-
ներ գոցուին: այս հրամանն ի գործ դրուե-
լէն ետք, Հայ և Տաճիկ Հասարակութիւնն
միահամուռ քաղաքէն դուրս տաճիկացի գերեզ-
մանատունն կը խռնին, և անդ երեք ժամու
չափ խորհրդակցելով միմեանց հետ, կը
որոշին յախուռն կերպիւ կառավարութեան
ապարանքն կոխել: Եւ ահա յանախնկայս ժողո-
վրդեան ձայնն քաղաքս զղրղնց: ամեն ոք
վաճառանոց կը վազէր: արդէն խուժանն
կառավարութեան դուռը յարձակեցաւ, և
գործին կուզէր, ցորենս կաղաղակէր: Կա-
ռավարութեան պաշտօնեայք կը պատաս-
խանեն թէ խորհուրդ ընենք և այնպէս
որոշում տանք ձեր խնդրոյն: Ուստի կառա-
վարիչ փաշան, Տարոնոյ ընդհ. դատախազ
Վահմ. Յակոբ էֆ. Տիրացուն և Ղաթին
գորաց հրամանատար փաշային ապարանքն
կերթան, և ժողովրդեան բազմութիւնն
ալ ասոնց կուեն:

Հասարակութիւնն (2-3000 ի չափ) հրա-
մանատար փաշայի օրհնականն առջև հաս-
նելով դարձեալ ըստ առաջնոյն ցորեն կու-
զենք կը պահանջէ: և երբ մէկ ժամու չափ
սպասելով պատասխան մը չ'են առնուր, կըս-
կին ամենքն մէկէն հրամանատարի ապա-
րանքն քարեր արձակել այնպէս սաստիկ կեր-
պով, որ պատուհաններու բոլոր ապակիներն
ջարկեցան և մէջ եղածներն ալ ներսի սե-
նեակներ փախան: Ժողովուրդը զայրացմամբ
դէպի գորանոց երթալու ատեն, չափ մը
ցորեան կը պատահի, զոր նոյն միջոցին ցի-
րուցան կընեն, այս ատեն սարսափելի
անձրև կը տեղար: Ժողովուրդը երկու ժամէն
ետք կը մեկնի պատասխան կուզենք ըսե-
լով, և անկէ ուղղակի կերթայ Միւշթիւն
փնտռելու, որ մզկիթին մէջ տաճիկ աշա-
կերտաց կը դասախօսէր: Միւշթիւն վտանգը
նկատելով, մզկիթին դուռը կը գոցէ, բազ-
մութիւնն կատողած կը սկսի մզկիթին պա-
տերն քակել և քարեր արձակել: Միւշթիւն

տանիք տարել է Աւղանիստանի մայրաքաղաքի
մէջ. այդ մէկ ու կէս դարուայ ընթացքում մեր
եկեղեցականները նրանց մասին ոչինչ տեղեկու-
թիւն չեն ունեցել. նրանք մուսուլման են եղել որ-
պէս զանգ ընդհանրութիւնից, նոյնպէս և ժողովրդի
հովիւներին: Բայց հաւատարմ իր հայրենի կրօնին,
հայր չինել է այնտեղ իր համար եկեղեցի, և պա-
տերազմելով բոլոր հալածանքներէ դէմ, սկսել է
պաշտել իր կրօնը: Անցել են հարիւրաւոր տարի-
ներ, տարանջատեալ ժողովրդի հետ եղած քաճա-
նանքը վախճանվել են, և նա մնացել է զուրկ
բոլոր ոգեւոր միութիւններէն:—Ենթադրեմք
մնացել են առանց միութեան, եկեղեցիներ
ցել է առանց ժամի և պատարագի, ննջեցեալները
թաղվել են առանց քահանայի: Այնուհետև հայոց
եկեղեցականներէ ոչ ոք ոտք չէ կոխել այդ եր-
կրի վրա:

Անգլիացի միսիոնարը լսում է, որ Աւղանիստա-
նի խաւարի մէջ հայազգի քրիստոնէականներ են գտն-
վում: Նա հայ եկեղեցականի նման անփոյթ, ան-
հոգ և երկնոյն չէ. նա որոնում է և գտնում է
հայերին: 200 ընտանիքից մնացել են մի քանի հո-
գի միայն. մկրտում է նրանց անկողնոց մնացած
ողջիւններն, հաղորդում է և հոգեւորական միս-
թարութ է նրանց:

Այժմ քնչ ասեմք այդ միսիոնարին:—Ասեմք,
թէ դու գնա հեթանոսներին քարոզող, դու իրա-
ւունք չունենա հայերի մէջ մտնելու, հայերը առանց
քեզ էլ քրիստոնէայ են, նրանք քրիստոնէութիւնը
ընդունեցին այն ժամանակ, երբ ձեր հայրերը Անգ-
լիայում վարչապետներ և կապալաներ էին:—Մենք
այդ պատասխանը կը տանք միսիոնարին, բայց ան-
տէր և անհովիւ մնացած հայ ժողովուրդը դար-
ձեալ նրան կընդունէ իր մէջ և մեր խօսքը կը
մնայ թափաք բարբառոյ յանապատին...

Հայ ժողովուրդը սիրում է իր եկեղեցին, նա հա-
ւատարմ էր մնացել հայրենի աւանդութիւններին,

նորահասակ անձնատուր կը լինի: Բազ-
մութիւնը Միւշթիւն ձեռք անցունել և
մազերէն բռնելն մէկ կընէ, այն ատեն
չորս կողմէն կը սկսին զարնել, հայհոյել, թըր-
նել «ամբարէն ցորեան կառնուս և աղբա-
տաց չ'ես տար» ըսելով: Հուսկ ուրեմն քանի
մը մարդիկ միջնորդելով մազապուր կը փախ-
ցնեն Միւշթիւն:

Վերջապէս Ղաթինն տան վրայ վերջին
յարձակումն կընեն և առանց միաս տալու
կանցնին: Թէպէտ ետքը իմացանք թէ
Ղաթին կինն հիւանդացի է եղեր, և Ղա-
թին ալ հրամանատար փաշային գալու ատեն
ապտակուեր է: Մոռցանք ըսել նաև որ
հրամանատար փաշան ալ ձիէն վար բերելով
ձեծել կուզեն եղեր, բայց նա կը յաջողի
փախչի:

Չորս ժամ ետքը Հասարակութեան մու-
նեակը բազմութիւնը ցրուելով ծանուցանելն
յետոյ, կաղաքարէ որ 85 կործանք գատ-
ուին սոյն գիշեր ամբարներու դռները պահ-
պանուր, որ մի գուցէ զօրքերն գաղտնի կեր-
պով ուրիշ տեղ փոխադրեն, և բազմութիւնն
կը ցրուի, հետեւեալ առաւօտուն գումար-
ւելու պայմանաւ:

Նոյն երեկոյ կառավարիչ փաշան, ընդ-
հանուր դատախազը և Ղաթին հեռագրա-
տունն երթալով բանակցութեան կը մտնեն
Բաղլըշ կուսակալին հետ: Այդ գիշերը մեծ
տաքնապով անցուցին: Կառավարութեան
դուռը բանտարկեալ 118-ի չափ աւազակ-
ներ պահապան զօրաց զիմադրելով կուզեն
փախչիլ, բայց զուեղ մը զօրք վրայ հասնե-
լով կը զսպէ այդ կատաղիներն:

Հետեւեալ առաւօտ (ապրիլ 16) ժամը
մէկին մուշեթիւն բարձրաձայն համայն հասա-
րակութիւնն ծածկաց գերեզմանոցն կը հրա-
ւիրէ: Այն ատեն թուրք և Հայ ժողովուրդը
հոն գումարուելով անմիջապէս, կը խորհ-
րակցին՝ նախ հեռագրատունը կոխելով,
հեռագրական կարեւոր գործիքներն ջարդեն և
ապա զինեալ կառավարութեան դուռն յար-
ձակին ամբարներն ցիր ու ցան ընելու,
առանց վախճանին ակնարկ մը նետելու: Այս
խորհրդէն ետքը ոմանք կառաջարկեն ընդհ.
դատախազին ապարանքն յաւարի առնել,
պատճառելով թէ դատախազը Վանեցիները

նա երկար սպասեց իր հովիւներին, երբ տեսաւ,
որ նրանք իր վրա ուղարկութիւն չեն դարձնում,
որ նրանք իր հոգեւոր պահանջներին բաւականու-
թիւն չեն տալիս,—ստիպւած եղաւ ընդունել օ-
տարներին: Իսկ մենք, հայ ինտելիգենցիայի ներ-
կայացուցիչներս, վրդովվում ենք այդ երեւոյթները
տեսնելու: Եւ եթէ գտնվում է մեղադրի մէկը, որ
աւելի հեռատուն է, որ աւելի սուր հայացքով
քննում է կատարվող իրողութիւնները,—որ աշ-
խատում է կրօնապէս բաժանված հայերին միաց-
նել ազգային ամբողջութեան հետ, առելով թէ
հայ կաթողիկոս էլ, հայ բողոքական էլ, հայ մաս-
նաւանդ էլ մեր եղբայրներն են,—մենք աշխա-
տում ենք մի հրէական մոլեռանդութեամբ նրա
ձախարչը դրոշմել ուրացութեան կնիքով, ասելով.
դու մեղաւորում ես եկեղեցու անմատչելութեան
դէմ, մենք ազգութիւն չունենք, մեր ազգութիւնը
եկեղեցին է:

Ո՞վ է ասում լուսաւորչականին. գնա կաթողիկ-
ոս դարձի, գնա բողոքական դարձի, գնա մաս-
նաւանդ դարձի: Ո՞վ է քանդում լուսաւորչա-
կան եկեղեցին:—Նա ինքն իրան մաշվում է, ժա-
մանակն է մաշում նրան:—Ո՞վ մի հին չէնք չէ
կարող զիմանալ ժամանակների խտութիւններին,
մանաւանդ երբ պահպանողներ և վերանորոգողներ
չունի:

Մեր եկեղեցին քանդվում է մեր եկեղեցական-
ների անհոգութիւնից: Դէրսմի բազմութիւ հայերը
երկար ժամանակ անհովիւ մնալով, հետզհետէ
քուրդ դարձան: Ո՞վ էր մեղաւոր: Իսկ Դէրսմի
ոչ Հնդկաւստանում է գտնվում, ոչ Աֆրիկայում
և ոչ էլ Աւստրալիայում: Դէրսմի շատ հեռու
չէ Ալթամարայ և Սիւր կաթողիկոսարաններից, Ե-
րուսաղէմի և Կ. Պոլսի պատրիարքարաններից:
Այժմ Դէրսմի մէջ բողոքականները մտնելով, ըսկ-
սել են քրդացած հայերին Մեքսիկայի տառերով Ա-
ւետարան կարդացնել, սկսել են մուսուլման մաշ-

չատ կը սիրէ և թէ կաշխատի ցորեանն հոն
զրկել: Սակայն բազմութեան 100-ին 90-ը
ն. Վանութեան արդարաւորութիւնն և
հայրենասիրութիւնը անոնց յիշեցնելով
կը սպառնան անոնց, որք այդպէս ապրէն դա-
ղավար մը կը կրեն:

Կառավարութիւնն վտանգի մեծութիւնն ի
նկատի առնելով, քաղաքիս երեւելիներէն վեց
անձինք կը կանչէ և կը զրկէ որ երթան
բազմութիւնն համոզեն և անոնց վերջին
պահանջն կառավարութեան ներկայացնեն:
Յիշեալ անձինք ժողովուրդը հազիւ հազ
համոզելով, անոնց ստորագրութեամբ հանրա-
գիր մը կը ներկայացնեն կառավարու-
թեան, յորմէ 6000 քիլէ ցորեան կը պա-
հանջեն անօթութենէ չը մեռնելու համար:

Այս միջոցին Բաղլըշ կուսակալէն հեռա-
գիր մը հասաւ ամբողջ Հայ և Տաճիկ հա-
սարակութեան, որով կը հրաւիրէր զանոնք
խաղաղելու, և կը ցուցնէր անոնց թէ կա-
ռավարութեան պարտքն է սովելոյց հաց
բաշխել, միանգամայն կը սպառնար պատժել
զանոնք ալ որք խռովարար են:

Կառավարիչ փաշան սոյն հեռագիրն ի
ներկայութեան համայն հասարակութեան
կարդալով, յարեց իր կողմէն: Եթէ խաղաղիք,
հիմա ձեր առաջարկը կուսակալին պիտի
ներկայացնեմ և առաժ հրամանս ձեզ հաղոր-
դեմ: Ապա հրաւիրեց որ խաղաղութեան
վերապահութեան համար խանութներն բա-
նան և կառավարութեան վերջին որոշման
սպասեն:

Տէր Խմբագիր, յոյս կայ, որ խռովութիւնն
պիտի վերնայ: Նոյն օրը երեկոյան տասնի
չափ խանութներ բացուեցան: Այսօր՝ Աւագ
հինգշաբթի, արդէն կիրակէ լինելով խանութ-
ներ գոց են: Վաղ իւրաքանչիւր ոք իւր
խանութն բանալով խաղաղութիւնն պիտի
հաստատուի: Եւ վտանգ եմք որ կառավա-
րութիւնն ժողովրդեան առաջարկը պիտի կա-
տարէ: Արդարեւ տեղուոյս կառավարութիւնն
այս գէպին մէջ մեծ խոհմտութեամբ վար-
ուեցաւ:

Ահա, Տէր Խմբագիր, Տարոնոյ մէջ ալ սարսա-
փելի կերպով իւր մահացուցիչ ոտքերը կը
դնէ սովն, որով ստիպեց ժողովուրդը յուսա-
հատական միջոցի մը զիմել: Տարոնը կը կարօ-
տի ազգին կարեկցութեան և զթութեան, և

րենի լեզուն սովորացնել նրանց: Ի՞նչ ասեմք այդ
քարոզիչներին. ասեմք, թէ դուք գնացե՛ք հեթա-
նոսներին քարոզեցե՛ք, դուք հայերի հետ
գործ չունէ՛ք:

Մենք սովորութիւն ունենք հարկաւորած ժա-
մանակ (երբ կամենում ենք մեր իմաստակութիւն-
ներին մի խաբուսիկ ձև տալ), հիմնվել Եւրոպայի
օրինակներով վրա: Եւրոպան շատ սխալներ է գոր-
ծել իր քաղաքակրթութեան պատմութեան մէջ, և
մենք խելացի կը լինենք այն ժամանակ միայն, երբ
Եւրոպայի սխալներից օգուտ կը քաղենք, և ոչ թէ
կարօքն կը հետենք նրանց:

Եթէ ընդունենք (որպէս ոմանք պնդում են) թէ
Աւետարանը պէտք է քարոզել հեթանոսներին
միայն և ոչ թէ այն ժողովուրդներին, որոնք վա-
ղուց արդէն ընդունել են քրիստոնէութիւնը,—
այդ դէպքում այլ են Լուծերի ընթացքային հար-
կաւոր չէր լինի, որ յայտնվեցաւ կաթողիկոսի ժողո-
վրդի մէջ, որի եկեղեցին հիմնված էր առաքելա-
ների օրերից: Բայց պէտք է վերջին աստիճանի
տգէտ լինել և չը հասկանալ, թէ Լուծերի ըն-
թացքային ողբան առաջ տարաւ Եւրոպայի քա-
ղաքակրթութիւնը, թէ և բազմաթիւ զոհերի արիւ-
նով գնվեցաւ:

Ամեն մի ազգի մի ու թ եւս գործը անհնար
կը լինի, եթէ նոյն ազգութեան զոյովութիւնը պայ-
մանաւորվում է միմիայն և կ եղ եց ու մէջ,— և ե-
թէ այդ եկեղեցուց դուրս գտնված ցեղակիցները
համարվում են ազգային մարմնի ամբողջութիւնից
կտրված անդամներ: Հեռու պէտք չէ գնար. մենք
ունենք մեր աշխի առջև մի պարզ և ժամանակա-
կից օրինակ. պատմութեան լուսնաւոր յիշուան
Մոսկովայի առաջնորդները սկսեցին պահանջել, թէ
ղանաղան սլաւոնական ցեղերին առանցիկ հետ
միացնելու նպատակին պէտք է ծառայէ օրթոդոքս
եկեղեցին: Այդ պահանջը վրաւորեց միւս սլա-

ւթէ այն սփոփիչ և կանգնող ձեռքն ի Տա-
րոն ալ չը կարկառեն, հաւատացե՛ք որ Մշոյ
երկիրը պիտի անմարդանայ:

* * *

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ԲԵՐԼԻՆ, 13/25 Յունիսի: Տեխնիկական
մանսնագործի անդամները և պետութիւն-
ների հաւատարմատարների մէջ կատարեալ
համաձայնութիւն կայացաւ Եպիլի և Թէս-
սալիայի սահմանական գծի վերաբերու-
թեամբ: Սահմանական նոր գիծը սկսվում է
Եպիլում Մեցցովի մօտ և Զադորեցկայա
նահանգը երկու մաս է բաժանում, Պարապ-
նօնի մօտ Կալամա գետի ափին է հասնում
և վերջանում է Կալամա գետի բերանի մօտ:
Թէսսալիայում սահմանը անցնում է Կամու-
նիօնեան սարերի սարաւանդային ծայրերից
դէպի Դմիտրիօն, այդտեղից դնում է Օլիմ-
պիական գագաթներով դէպի Էլբա, այդտե-
ղից իջնում է դէպի Էգէյան ծովը: Զադո-
րեցկայա նահանգի 32000 բնակիչներից,
սահմանական նոր գծի պատճառով 11,000
բնակիչները Յունաստանին են անցնում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունիսի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ
93 1/8 ռ., երկրորդ 92 1/8 ռ., երրորդ 93 1/2 ռ.,
չորրորդ 93 1/4 ռ., ներքին 5% առաջին փոխա-
ռութեան տոմսակը արժէ 230 ռ. 75 կ.
երկրորդ 224 ռ. 50 կ., արևելեան առաջին
փոխառութեան տոմսակը արժէ 91 1/2 ռ.,
երկրորդ 91 3/8 ռ., երրորդ 91 1/4 ռ., ոսկի 7
ռ. 75 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ
25 1/2 շ. պէնս, ռուսաց 100 ռուբլ. Բերլինի
վրա 129 մարկ 25 պֆ., Համբուրգի վրա
218 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 268 Ֆր.
50 սանտ.: Բօրսայի արամադրութիւնը հան-
գիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի: „НОВОЕ
Время“, լրագիրը հաղորդում է իրրեւ
հաստատ լուր, որ 20 նաւերի հրամանատար
Մեծ Ովկիանոսի մէջ նշանակվում է ծովային
մինիստրութեան կառավարիչ Լեօսովսկի:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Լօնդօնի կրօնական զգացմունքը և պանսլաւոնիզմը
մնաց որպէս մի երևակայական իրէաւ:

Դժբաղդաբար մենք էլ ունենք մեր ողորմելի
կատկոլները, որոնք լուսաւորչական եկեղեցու
մասին նոյն ցնորքներն ունեն գտնվում:

Մենք մեզ թոյլ չենք տալ մեր կաթողիկոս, մեր
բողոքական և միջին անգամ մեր ժամանակակա-
նաւորների կրօնական համոզմունքներին դիպել,
միայն կախատենք զարգացնել նրանց մէջ ազ-
գայնութեան գաղափարը: Մենք կը ցանկա-
նանք, որ նրանք ունենան իրանց ինքնուրոյն
և ազատ եկեղեցիները, անկախ Հռօմի պրօպագան-
դայից և անկախ օստրապոլի միսիոնարների և պա-
տօրների ազդեցութիւնից: Մենք կը ցանկանանք,
որ նրանք հայոց լեզուով խօսէին, հայոց լեզուով
կրթէին իրանց զաւակներին և հայոց լեզուով ա-
ղօթէին: Իսկ հալածել նրանց, հերիսիկոս համա-
րել և այսպիսով աւելի զգուցանել և բաժանել մե-
զանից,—այդ յիմարութիւնները մենք չենք անի:
Մենք խորհուրդ կը տանք մեր լրագրութեանը և
մանաւանդ Կ. Պոլսի մամուլին հետեւել այդ տակ-
տիկային: Անցեալ սխալները պէտք է ուղղել:
Այժմ մեզ հայ է պէտք և մեր իղէալը պէտք է
լինի հայութիւնը: Կրօնական համոզմունք-
ները պէտք է խոնարհվեն այդ գաղափարի առջև...

Բայց զարմանալիս այն է, որ դեռ ևս գտնվում
են մեր մէջ բանուգործ չունեցող մարդիկ, որ աշ-
խատում են յարուցանել կրօնական վիճաբանու-
թիւններ, մի այնպիսի ժամանակ, երբ մեզ պէտք
են աւելի լուրջ և աւելի նպատակայարմար աշխա-
տութիւններ:

Մէկըզպէ

